ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2018 թ.
№ 16 (1033)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Վոլեյբոլի աղջիկների թիմն առաջինն է

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ նոյեմբերի 25-29-ն անցկացվեց վոլեյբոլի աղջիկների միջբուհական խաղեր:

Միջբուհական խաղերին մասնակցում էր բուհական 7 թիմ՝ 2 ենթախմբով:

Մանկավարժական համալսարանի աղջիկների թիմը ենթախմբում հաղթեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի թիմերին, իսկ կիսաեզրափակչում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին՝ հնարավորություն ստանալով ուժերը փորձել 1-ին տեղի համար պայքարում:

Մրցելով Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի թիմի հետ՝ ՀՊՄՀ վոլեյբոլի աղջիկների հավաքականը 2:0 հաշվով հաղթանակ տարավ մրցակցի հանդեպ և զբաղեցրեց մրցանակային և պատվավոր 1-ին տեղը:

Մանկավարժական համալսարանը շնորհավորում է վոլեյբոլի աղջիկների թիմին հերթական ձեռքբերման համար և մաղթում նոր նվաճումներ և գավաթներ:

ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒ ԴԱՎԱՆԱՆՔԻՆ

«Իհարկե, մարդը կատարում է այն, ինչին ի վիճակի է: Ես ընտրեցի իմ ժողովրդի հոգևոր գանձերից ամենաթանկագինի՝ չքնաղ մայրենիի ուսումնասիրությունն ու ուսուցումը: ...Հավատարիմ եմ մնում իմ սկզբունքներին ու դավանանքին: Առաջնորդվում եմ հույսով ու լավատեսությամբ: Դրանք միշտ էլ ինձ ապավեն են եղել»... 1980 թվականի սեպտեմբերի 17-ին օրագրային այսպիսի գրառում է արել Աշոտ Աբրահամյանը, ով իր կյանքով ու գործունեությամբ պիտի մնար սերունդների հիշողության մեջ:

Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ու հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված հանրապետական գիտաժողովը հիրավի երախտագիտության տուրք էր մեծ Ուսուցչապետ Աշոտ Աբրահամյանի հիշատակին: Բանասիրական գիտությունը նախընտրած սերունդներն այսօր էլ գնում են նրա ուղենշած ճանապարհով, սովորում նրա թողած գիտական ժառանգությունը կազմող դարակազմիկ գրքերով՝ «սուզվելով լեզվաբանության խորախորհուրդ աշխարհը»: Նրա ուսանողներն այսօր լուրջ գիտնականներ են, ակադեմիկոսներ, պրոֆեսորներ ու դոցենտներ:

➤2

Միասին ընդդեմ կոռուպցիայի

Մանկավարժական համալսարանը ԵԱՏՄ-ում հայտարարված «Միասին ընդդեմ կոռուպցիայի» մրցույթում գրավեց երրորդ տեղը: Հիշեցնենք, որ Մանկավարժական համալսարանի Լրատվության և հանրության հետ կապերի վարչության ռեժիսոր Արտյոմ Աղասարյանի հեղինակած սոցիալական գովազդը Հայաստանում գրավել էր առաջին պատվավոր տեղը և անցել եզրափակիչ փուլ, որտեղ մրցել էր 1512 հոլովակից եզրափակիչ անցած մյուս 5-ի հետ:

Օրերս ամփոփվեց «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով հակակոռուպցիոն սոցիալական գովազդի երիտասարդական միջազգային մրցույթը և հրապարակվեցին արդյունքները:

Մասնակից երկրների ներկայացուցիչներից կազմված միջազգային ժյուրիի որոշմամբ՝ «Լավագույն տեսահոլովակ» անվանակարգում հայաստանյան հաղթող ՀՊՄՀ-ի ռեժիսոր Արտյոմ Աղասարյանի տեսահոլովակը զբաղեցրեց 3-րդ հորիզոնականը, Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչ Ալեքսեյ Իսակովի անիմացիոն տեսահոլովակը՝ 2-րդ, իսկ Բելառուսի ներկայացուցիչ Իվան Շեվմերի սլայդշոուն՝ 1-ին տեղը:

Հիշեցնենք, որ մրցույթի շրջանակում ԱՊՀ Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի 14-ից մինչև 35 տարեկան քաղաքացիներին, ինչպես նաև երիտասարդական ստեղծագործական խմբերին առաջարկվել էր www.anticorruption.life պաշտոնական կայքում զետեղել «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով հակակոռուպցիոն սոցիալական գովազդի պաստառներ և տեսահոլովակներ:

Ընդհանուր առմամբ մրցույթին մասնակցել էր 1512 տեսահոլովակ և 7821 պաստառ:

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒ ԴԱՎԱՆԱՆՔԻՆ

➤1 «Երջանիկ է այն ուսանողը, որն աշակերտել է այս մանկավարժ հսկային: Ես այդ երջանիկներից մեկն եմ»,-ասում է ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը ու շարունակում. «Մանկավարժական համալսարանի հիշատակության մատյանում կան անուններ, որոնք զարդարել են Մանկավարժական մայր բուհը, իրենց նկարագրով, գիտական վաստակով և մանկավարժական ծանրաբեռ կշռույթով արժանի տեղ են զբաղեցրել բուհի պատմության մեջ: Այդ երախտավորներից մեկն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսենի Աբրահամյանը»:

Նոյեմբերի 21-ին դասախոսները, ուսանողները, ոլորտի անվանի մարդիկ, անվանի գիտնականի հարազատներն ու ընկերները հավաքվել էին Բանասիրական ֆակուլտետում՝ մասնակցելու մեծ գիտնականի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին: Լիագումար նիստում բացման խոսք ասաց ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը, մեծ գիտնականի կյանքի ու գործունեության հետաքրքիր էջերին անդրադարձավ պրոֆեսոր Ալելիտա Դոլուխանյանը, իսկ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը ներկայացրեց «Այծից արքայ» արտահայտությունը. իմաստաբանություն և տիպաբանություն» զեկուցումը:

«Նրա գիտական ճշգրիտ սահմանումները, ծանրակշիռ փաստարկները վերլուծություններն ու ստուգաբանությունները գրավում էին ունկնդրին, մղում այլևայլ ուսումնասիրությունների»,- ասում է Ա. Գալստյանը՝ մտովի հետ նայելով շուրջ 25 տարի Մանկավարժական բուհի հայոց լեզվի ամբիոնը ղեկավարած լեզվաբանության երախտավորին, սիրված դասախոսին, բազմաթիվ գիտական գրքերի հեղինակին:

«Աբրահամյան ազգանունը կրում են գիտության տարբեր ոլորտների նշանակալի դեմքեր, բայց պրոֆեսոր Աբրահամյան ասելիս նախ և առաջ նկատի ենք ունենում մեծ մանկավարժ, գիտնական, լեզվաբան Աշոտ Աբրահամյանին: Նրա մեծագույն վաստակը, մեծ մանկավարժի անունը արդիական է բոլոր ժամանակների համար»,-ասաց ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը՝ շարունակելով, որ հպարտ է պրոֆեսորի՝ Մանկավարժական համալսարանում երկար տարիներ դասավանդելու և գիտության մեջ ծանրակշիռ ու բեկումնային դեր ունեցող ձեռնարկների ու աշխատությունների ստեղծման փաստով: Այդ աշխատությունները հայագիտության ոլորտի զարդն են եղել և արդիական են մինչև այսօր: Ռուբեն Միրզախանյանը միաժամանակ պատմաբանի տեսանկյունից արժևորեց գիտնականի գործունեությունը՝ նրա վաստակն ու ավանդը համարելով բարձր երևույթ ժամանակի մեջ:

«Ամեն տաղանդավոր մարդ ծնվում է կյանքում իրականություն դարձնելու այն պարգևը, որ նրան տրված է ի վերուստ: Աշոտ Արսենի Աբրահամյանին ճակատագիրը կանխորոշել էր նվիրվել լեզվաբանությանը և հատկապես մեր «արքայական» գրաբարին ու դառնալ ուսուցիչ նաև բարձրագույն դպրոցում նոր կադրեր պատրաստող գիտնականի վարպետությամբ,-այսպես սկսեց իր զեկուցումը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալելիտա Դոլուխանյանը, ով Աշոտ Աբրահամյանի աշխատանքային գործունեությանն անդրադարձ արեց ըստ մանկավարժական և գիտական շրջափուլերի: 1944 թվականից արդեն նա դասավանդել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական մայր բուհի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում, իսկ մինչ այդ աշխատել էր Հրազդանի շրջանի դպրոցներում… Մանկավարժ էր ողջ էությամբ, որովհետև իր աշխատանքում առաջնորդվում էր ազգապահպանման և մարդասիրության գաղափարներով»:

Ա. Աբրահամյանի ուսանողուհին հիշում է, թե ինչպես «Լեզվաբանության ներածություն» առարկայի դասախոս Ա. Աբրահամյանն առաջին կուրսում մտավ լսարան և իր առինքնող տեսքով, հիանալի ձայնով, անսպառ գիտելիքներով դասավանդեց: Առաջին պահից ուսանողները զգացին, որ իրենց դասավանդում է դասական մակարդակի գիտնական-մանկավարժը: Երբեմնի ջանասեր ու նվիրյալ ուսանողը այժմ խստապահանջ դասախոս էր և չէր սիրում ուսման մեջ թերացողներին:

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Աշոտ Աբրահամյանին շատ բարձր են գնահատել թե՛ մանկավարժական ինստիտուտում և թե՛ ակադեմիայում, իսկ աշակերտներն աչքի էին ընկնում հատկապես գրաբարի գծով:

Գիտության մեջ իսկական հայտնագործություն էր Հայաստանի բուհերի համար հրատարակված նրա «Գրաբարի ձեռնարկը», որը մինչև այսօր իր տեսակի մեջ մնում է լավագույնը: Անմրցելի են նաև նրա բազմաթիվ մենագրությունները ու դասական թարգմանությունները գրաբարից:

Նրա երկու հիմնարար տեսական աշխատությունները հրատարակվել են Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայում՝ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (Երևան, 1953), իսկ1962 թվականին լույս է տեսել «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը:

Լիագումար նիստին հաջորդեց աշխատանքը չորս հանձնախմբերում, որոնք ղեկավարում էին Վ. Համբարձումյանը, Ա. Գալստյանը, Վ. Կատվալյանը և Լ. Խաչատրյանը: Լեզվաբանական գիտական ոլորտի ուշագրավ զեկուցումներով հանդես եկան համալսարանի դասախոսներն ու մագիստրոսները, հրավիրյալ լեզվաբաններ, այլ բուհերի ուսանողներ ու մասնագետներ:

Դավիթ Գյուրջինյանը հանգամանորեն ներկայացրեց Ա. Աբրահամյանի կիրառած բառուսուցման հնարները, Էդվարդ Մկրտչյանը՝ գրաբարի շարահյուսական իրողությունների ըմբռնումը, Ս. Ղարիբյանը ներկայացրեց արևմտահայերենի դերբայների դիտարկումը Ա. Աբրահամյանի աշխատություններում և այլն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

(Պրոֆեսոր Ա.Ա.Աբրահամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Կան մարդիկ, որոնց տեսնելիս, որոնց սոսկ անունը լսելիս կամ հիշելիս պատկառանքով ես համակվում: Եվ ավելի մեծ է լինում այդ զգացումը, եթե այդ մարդիկ քո ուսուցիչն են եղել, որոնցից շատ բան ես սովորել, որոնց հետ նաև աշխատել ես, մտերմացել ու դարձել նրանց մարդկային բարեմասնությունների վկան: Այդ մարդկանցից էր մեր սիրելի ուսուցիչը՝ Աշոտ Արսենի Աբրահամյանը: Գիտության նվիրյալ էր՝ ճշմարիտ գիտնականի հատկանիշներով օժտված (արտակարգ աշխատասիրություն, ուսումնասիրվող նյութի համակողմանի հետազոտում և իմացություն, սեփական տեսակետների համոզիչ հիմնավորում, մտքերը հստակ շարադրելու կարողություն և այլն), հատկանիշներ, որոնք Ա.Աբրահամյանը լավագույնս դրսևորել է իր գիտական ողջ վաստակի մեջ և դարձել հայ լեզվաբանության երախտաշատ, մեծանուն դեմքերից մեկը:

Շատ բարձր էր նրա հեղինակությունը բուհական մանկավարժական աշխատանքում: Արհեստավարժ դասախոս էր՝ ուսուցման ինքնատիպ վարպետությամբ ու հմայքով: Գրաբարից ժամանակակից հայերենի տեսության դասընթացների ծրագրային թեմաների բովանդակությունն իր սաներին էր հաղորդում հանդարտ, մատչելի շարադրանքով, յուրացումը ստուգում, գնահատում նրանց նկատմամբ հոգածո վերաբերմունքով: Լավ պատասխանների դեպքում գոհունակ ժպիտը և խրախուսական արտահայտություններն անպակաս էին, իսկ եթե պատահում էր, սաների՝ ուսումնական պարտականությունների կատարման մեջ թերացումներ էր տեսնում, սառը, զգաստացնող տոնով պարտադրում էր դրանք անպայման վերացնել լրացուցիչ աշխատանքով:

Անչափելի էին նրա սերն ու նվիրվածությունը մայրենիի նկատմամբ: Մեկ առ մեկ ուսումնասիրել էր մեսրոպատառ մատյանները, գրական ու պատմական հին, նոր և նորագույն աղբյուրները (միաժամանակ ականջը միշտ բանավոր խոսքի ելևէջումներին) և բացահայտել հայոց լեզվի տարբեր շրջափուլերի, դրսևորումների անհուն ծալքերն ու նրբությունները: Ինչքա՜ն է պատահել՝ լեզվական ինչ-որ հարցում տարակուսելիս կամ վիճելիս սպառիչ պատասխանի աներկբա ակնկալիքով ասել ենք.

-Ընկեր Աբրահամյանին դիմեք. տեսնենք՝ ի՞նչ կասի, ինչպե՞ս կբացատրի:

Եվ նրա բացատրությունը միշտ հիմնավոր էր, համոզիչ:

Չէր հանդուրժում մարդկանց խոսքում՝ գրավոր, թե բանավոր, անփութություն, թափթփվածություն, լեզվական մեղանչումներ: Ինքը միշտ անաղարտ, արտահայտիչ էր հնչեցնում մայրենին և գրավոր շարադրում մտքերը:

Մարդկանց բնութագրելիս միշտ վերապահությամբ էր արժևորում նրանց հայրենասիրությունը, ովքեր ինչ-ինչ պատճառներով չգիտեին իրենց մայրենի լեզուն, և մանավանդ, չէին էլ ջանում սովորել: Ու թեպետ երբեմն խստագին էր հնչում նրա խոսքը այդպիսիների նկատմամբ, բայց դա հասկանալի և ընդունելի էր, չէ՞ որ ճշմարիտ է. «Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ» (Ստ. Զորյան):

Արդեն քանի՜ տարի է, ինչ վախճանվել է մեր Ուսուցիչը, բայց իր վարքուբարքով, բարեկրթությամբ, հոգևոր մեծ հարստությամբ, քաղաքացիական արժանապատվությամբ առինքնող մարդկային օրինակելի նկարագիրը մեր հոգում միշտ վառ է: Հարգա՛նք, խորին հարգանք ու խոնարհում Աշոտ Աբրահամյանի անմոռաց հիշատակին:

Հովհաննես ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
Հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար

Հանուն Երկիր մոլորակի անվտանգության

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 29-30-ը անցկացված «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության և ագրոկենսաբազմազանության հզորությունների գնահատումը և կենսանվտանգության ապահովման գիտակրթական հիմունքների ներդրումը» խորագրով երկօրյա կոնֆերանսը հետաքրքիր քննարկումների հարթակ դարձավ:

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարի մարտահրավերները մեծամասամբ վտանգում են Երկիր մոլորակի գոյությունը՝ կլիմայի գլոբալ փոփոխություններից մինչև երկրի ընդերքի ձևախեղում և կենսաբազմազանության ոչնչացում...Ասել է թե՝ վտանգված է մեր ապագան, և յուրաքանչյուրն իր տեղում և իր չափով պետք է մտածի Երկիր մոլորակի

անվտանգության մասին: Այս մտահոգությամբ իր ելույթն սկսեց Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր Ռուզան Սադոյանը՝ ողջունելով հանրապետական գիտաժողովի մասնակիցներին ու կարևորելով ընտրված թեմայի արդիականությունը:

ՀՊՄՀ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց հատկապես ուսանողների մասնակցությունը նման կոնֆերանսներին, որովհետև այդպիսի քննարկման հարթակները ոչ միայն երկխոսության, այլև հետագա հանդիպումների հնարավորություն են ընձեռում:

Նա անդրադարձավ լոկալիզացիոն խնդիրներին՝ հիշեցնելով, որ գիտնականները փորձել են գլոբալ հարցերի հանդեպ լոկալ մոտեցումներ հանդես բերել, մարդու միջամտությանը բնական գործընթացներին, որը բերում է թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություններ, ինչպես նաև խոսեց վերջինիս հետևանքով վտանգվող կենսաբազմազանության մասին:

Այնուհետև «Հայկական լեռնաշխարհի կենսաբազմազանությունը» թեմայով զեկուցմով հանդես եկավ կենսաբանական գիտությունների դոկտոր Արտաշես Ջիրոյանը:

«Երկրագնդի այն տարածքը, որը որը տեղակայված է Սև, Միջերկրական, Կասպից ծովի և Պարսից ծոցի միջև՝ մարդկության պատմության ամենահնագույն ժամանակներից ի վեր կոչվել է Հայք, Հայաստան, Արմենիա, Հայոց աշխարհ, Հայկական բարձրավանդակ կամ Հայկական լեռնաշխարհ, որի երկրաբանական կառուցվածքի վերլուծությունը վկայում է, որ այն սկսել է ձևավորել դեռևս վերին պրոտերոզոյան դարաշրջանում»,-ասաց զեկուցողը՝ անդրադառնալով այդ տարածքի յուրահատուկ ու բազմազան բուսական ու կենդանական աշխարհով հարուստ ու ինքնատիպ կենսաբազ-

մազանությանը: Նա համառոտ նկարագրեց հիմնական՝ էկոհամակարգերը, անդրադարձավ մեր լեռնաշխարհի կենդանական հարուստ բազմազանությանը՝ խոսելով գոյություն ունեցող ու անհետացած կենդանիների մասին:

Կոնֆերանսին մասնակցում էին և զեկուցումներով հանդես ինչպես ՀՊՄՀ, այնպես էլ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի, Պոլիտեխնիկական ինստիտուտի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոսներ և ուսանողներ, գիտական ինստիտուտների ու կենտրոնների, ՊՈԱԿ-ների ներկայացուցիչներ:

Զեկուցումներն էլ վերաբերում էին վայրի օգտակար բույսերի կենսաբազմազանության և կենսանվտանգության խնդիրներին, բնակենսաձևերի համաչափությանն ու համամասնությանը, Տավուշի ջրամբարում արծաթափայլ կարասի վտառի սեռային կազմին և ձևաբանական հատկանիշների երկձևությանը, Ազատ գետի ավազանի գիհու նորանտառների ֆլորայի բազմազանությանը, Կարմիր գրքում գրանցված թռչունների ներկայացուցիչների նկարագրին և այլն:

Նոյեմբերի 30-ին գիտական կոնֆերանսի զեկուցողները ուսանողներն էին: Կոնֆերանսն ավարտվեց արդյունքների ամփոփմամբ:

Կենսաբազմազանության խնդիրներից մինչև բնության հատուկ պահպանվող տարածքները որպես էկոտուրիզմի կազմակերպման օբյեկտներ. հետաքրքիր քննարկումներից ու բացահայտումներից մինչև կենսապահպանության անվտանգությունն ապահովող կարևոր ու ժամանակակից առաջարկություններ: Սրանք այն թեմաներն ու հիմնախնդիրներն էին, որոնց շուրջ քննարկումներում ներկաները փորձեցին լուծումներ գտնել:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Փիլիսոփայության համաշխարհային օրը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ 2002 թվականից յուրաքանչյուր նոյեմբեր ամսվա երրորդ հինգշաբթին նշվում է որպես Փիլիսոփայության համաշխարհային օր: Մանկավարժական համալսարանում այդ օրը նշանավորվեց սեմինարի անցկացմամբ, որը նախաձեռնել էր ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնը:

Իրենց զեկուցումներում դասախոսները և ուսանողները ներկայացրին փիլիսոփայություն գիտության անսահման, անեզր աշխարհը, գաղափարները, ժառանգությունը, հասարակության մեջ ունեցած ազդեցությունն ու դերը:

Խոսելով կրոնագիտության ու կրոնի փիլիսոփայության մասին՝ դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը այն դիտարկեց որպես հոգևոր գործունեության ինտելեկտուալ ձև, միաժամանակ կարևորեց սեմինարի անցկացման ձևաչափով կենդանի ու անմիջական քննարկումները:

Զեկուցումները բազմաբովանդակ էին. դասախոսները և ուսանողները կոնֆուցիականության և լուսավորականության օրինակով ներկայացրին փիլիսոփայական գաղափարները, մշակույթի սոցիոլոգիան՝ որպես միջդիսցիպլինար գիտակարգ, անդրադարձան Դավիթ Անհաղթի փիլիսոփայությանը:

Սեմինարի ընթացքում եղան հարց ու պատասխան, ակտիվ քննարկումներ, և ուսանողներին հնարավորություն ունեցան առավել ընդլայնել իրենց պատկերացումները փիլիսոփայության մասին և ձևավորել նոր մոտեցումներ:

Սյուզաննա ԿՈՄԵՍՅԱՆ

ՕԼԻՄՊԻԱԴԱ. սեփական կարողություններն արտահայտելու հնարավորություն

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետը կազմակերպել էր դպրոցական օլիմպիադա «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից: Հանրապետության տարբեր մարզերից ֆակուլտետ էին ժամանել հանրակրթական դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանների շուրջ 100 աշակերտ՝ ստուգելու իրենց գիտելիքները հայոց լեզվից և գրականությունից: Թեստերը կազմվել էին ավարտական միասնական քննությունների համար նախատեսված նյութերի հիման վրա: Մինչ մրցույթի մեկնարկը աշակերտները շրջեցին ֆակուլտետում, ծանոթացան նրա կառուցվածքին ու գործունեությանը: Մասնակիցներին ֆակուլտետում ողջունեցին պրոֆեսորներ, դասախոսներ, ուսանողներ:

Հանձնախմբի նախագահ պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանն իր խոսքում նախ նշեց, որ արվել է հնարավոր ամեն բան անաչառ քննություն ապահովելու համար: «Կհրապարակվեն արդյունքները և մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտները կխրախուսվեն, իսկ օլիմպիադան կդառնա յուրօրինակ օգնություն ավագ դպրոցի աշակերտներին՝ նախապատրաստվելու պետական ավարտական քննություններին»,-նկատում է պրոֆեսորը:

Օլիմպիադայի անցկացմամբ ոչ միայն խնդիր էր դրված առանձնացնելու լավագույն աշակերտներին, այլ նաև նրանց տալու սեփական կարողություններն ինքնուրույն արտահայտելու հնարավորություն:

«Փորձում եմ տեսնել կյանքի լուսավոր ու լավ կողմերը»,- ասում է Քրիստիան Սաբոն

Քրիստիան Սաբոն Բուդապեշտի Պիտեր Պազմանի համալսարանի 5-րդ կուրսի ուսանող է: Նա 25 տարեկան է, ապրում է Շորոքշարում, որը գտնվում է Բուդապեշտի հարավում:

Ուսանողների փոխանակման շրջանակներում սեպտեմբերից Քրիստիանը Հայաստանում է և մեկ կիսամյակ սովորելու է ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության Ֆակուլտետում՝ անցնելով տարբեր դասընթացներ:

- Քրիստիան, ինչպե՞ս որոշեցիր գալ Հայաստան:

- Ամեն ինչ սկսվեց այն օրը, երբ երկու տարի առաջ ես հանդիպեցի Բուդապեշտի Պիտեր Պազմանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչին: Ինքս էլ սովորում եմ այդ համալսարանի մագիստրատուրայի 5-րդ կուրսում: Վերջինս ուսանողներին պատմեց Կովկասի տարածաշրջան մեկնելու մասին և ինձ ուղղորդեց մեկնել Հայաստան՝ մեկ կիսամյակ սովորելու Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

- Ի՞նչ դժվարությունների ես հանդիպում Հայաստանում:

- Միայն տաքսու վարորդների հետ: Նրանք փորձում են խաբել օտարերկրացիներին: (ասում է կատակով, նրա հունգար ընկերոջից տաքսու վարորդը մեծ գումար է պահանջել):

-Արդյո՞ք տաքսու վարորդի պահվածքով կարծիք չես կազմել բոլոր հայերի մասին:

-Օ, ոչ: Մեր երկրում էլ է պատահում, որ տաքսու վարորդները խաբում են այլ երկրից եկածներին:

-Ի՞նչ դասընթացներ ես անցնում մեր համալսարանում և գո՞հ ես այն կրթությունից, որ ստանում ես մեզ մոտ:

-Շատ բան եմ սովորում այստեղ՝ Կովկասի խորհրդայնացում, ցեղասպանություն, սփյուռքի պատմություն, հայոց լեզու, ռուսաց լեզու և երաժշտագիտություն: Ես շատ գոհ եմ:

-Վերադառնալուց հետո ի՞նչ ես անելու, հայագիտությա՞մբ ես շարունակելու...

-Կվերադառնամ հայրենիք, Պիտեր Պազմանի համալսարանում կշարունակեմ կրթությունս՝ մագիստրատուրայից հետո կընդունվեմ ասպիրանտուրա, այնուհետև կպաշտպանեմ դոկտորական: Շարունակելու եմ զբաղվել հայագիտության ուղղությամբ և մտադիր եմ հետագայում կրկին գալ Հայաստան:

-Կամուսնանա՞ս հայ աղջկա հետ...

-Չգիտեմ, դժվար հարց է...

-Ի՞նչ է քեզ ավելի շատ դուր եկել Հայաստանում:

- Հունգարիայում մարդիկ ավելի ծանր են, Հայաստանում այդպես չէ:

Սիրում եմ ձեր ազգային ուտեստները:

-Ի՞նչ տարբերություններ կմատնանշես մեր և ձեր համալսարանների կրթական ծրագրերում:

-Միայն կասեմ, որ երկու համալսարանում էլ սովորելը դժվար է: Հայաստանում մի քիչ ավելի դժվար է, որովհետև դասախոսություններն անգլերեն լեզվով է, իսկ մեր համալսարանում՝ մայրենի լեզվով:

-Մանկուց ի՞նչ էիր երազում դառնալ...

-Բիզնեսմեն:

-Իսկ ինչո՞ւ փոխեցիր մտադրությունդ:

-Որովհետև բիզնեսում անարդարություն կա:

-Քեզ ինչպիսի՞ երիտասարդ ես համարում, ո՞ր հատկանիշներն ես գնահատում քո մեջ:

-Ես լավատես մարդ եմ, փորձում եմ տեսնել կյանքի լուսավոր ու լավ կողմերը:

-Ի՞նչ հոբբի ունես:

-Զբաղվում եմ տարբեր իրերի հավաքածուներով՝ դրամներ և այլն:

-Ի՞նչ կպատմես ընտանիքիդ մասին:

-Իմ ընտանիքը մեծ չէ՝ ունեմ հայր, մայր և փոքր եղբայր: Այսօր ռուսաց լեզվի դասին էլ եմ պատմել ընտանիքիս մասին:

-Երևանի և ընդհանրապես Հայաստանի ո՞ր տեսարժան վայրերում ես եղել:

-Եղել եմ Տաթևում, տեսել եմ Գառնին, Սևանի վանքը... «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում էլ երկու տարի առաջ եղել եմ շատ տեսարժան վայրերում:

-Ի՞նչ կուզեիր ասել հայ երիտասարդներին:

-Կասեի համեցեք մեզ մոտ՝ Պիտեր Պազմանի և այլ համալսարաններում սովորելու: Ուրախ կլինենք տեսնել ձեզ մեր՝ հայագիտության ամբիոնում: Բարով գաք:

-Իսկ քեզ համար հե՞շտ է շփվել հայ երիտասարդների հետ: Ունե՞ս հայ ընկերներ:

-Այո, դժվար չէ: Ես շփվում եմ հայ ընկերների հետ:

-Մենա՞կ ես եկել մեր բուհ:

-Ոչ, ինձ հետ նույն փոխանակման ծրագրով Մանկավարժական համալսարանում սովորում է նաև Բալինտ Հալմին:

-Ի՞նչ կուզես պատմել քո երկրի մասին:

-Իմ երկրում Հայաստանի նման շատ լեռներ չկան, ավելի շատ դաշտավայրեր են, բայց այցելուներին դուր է գալիս իմ երկիրը:

Բուդապեշտը հրաշալի քաղաք է, ամռանը գեղեցիկ է Բալատոն լիճը, այն կենտրոնական Եվրոպայի ամենամեծ լիճն է, շատ գեղեցիկ ամրոցներ ու եկեղեցիներ ունենք:

Հայ ուսանողներին էլ է դուր գալիս Բուդապեշտը, երբ նրանք «Ամառային դպրոց» կամ այլ ծրագրերով գալիս են Բուդապեշտ:

-Դժվա՞ր է սովորել հայերեն, ինչքանո՞վ ես տիրապետում:

-Ես հասկանում եմ, մի քիչ խոսում եմ, բայց դժվարանում եմ գրել: Այնքան էլ դժվար չէ, հատկապես ռուսերենից հետո:

Ես հասկանում եմ՝ պետք է լավ սովորեմ հայոց լեզուն ու պատմությունը, որպեսզի կարողանամ հայագիտությամբ զբաղվել: Կփորձեմ ավելի լավ սովորել, որպեսզի հաջողության հասնեմ:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Լսեցին Ռաֆֆի Մուսախանյանի դասախոսությունը

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսանողների ու դասախոսների համար հատուկ դասախոսությամբ հանդես եկավ ԱՄՆ-ում բնակվող մեր հայրենակից նկարիչ և քանդակագործ Ռաֆֆի Մուսախանյանը:

Ռաֆֆի Մուսախանյանը 1983 թվականին ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետը՝ ուսումնառելով քանդակագործ Ղ. Չուբարյանի, գեղանկարիչներ Ֆ. Սարգսյանի, Է. Խարազյանի, Վ. Մուշեղյանի մոտ:

Դասախոսությունը նվիրված էր նոր նյութերի կիրառմանը կերպարվեստում: Արվեստագետը ներկայացրեց ոչ միայն նոր նյութերի կիրառման ասպարեզը, այլև իր կատարած աշխատանքները: Հավելենք, որ նկարիչն աշխատել է հոլիվուդյան մի քանի տասնյակի հասնող ֆիլմերում: Նա բացել է «Classic and Modern Art» սեփական արվեստանոցը և ներկայանում է որպես ինքնատիպ ստեղծագործող, որի աշխատանքները նոր խոսք են արվեստի աշխարհում:

Աշնանային ցուցահանդես. «Ազատության շունչը»

Մանկավարժական համալսարանի բարձրահարկի ընդարձակ սրահում ներկայացված ցուցահանդեսը կրում էր «Ազատության շունչը» խորագիրը: Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հեղինե Խաչատրյանի և մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Խաչատրյանի նախաձեռնությամբ ձեռնարկը համալսարան էր բերել մեծ թվով աշակերտների, ուսուցիչների, հյուրերի:

Բարձրահարկի սրահում երրորդ կուրսի ուսանողները ներկայացրել էին աշնանային մոտիվներով ստեղծագործական աշխատանքներ՝ նկարչությունից մինչև կիրառական արվեստ: Բնանկարները, նատյուրմորտները, կոլաժները աշնանային թարմ ու հետաքրքիր գույների մատուցմամբ հետաքրքրություն էին առաջացրել, գրավել ներկաների ուշադրությունը: Ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ամիսների աշխատանքի ու տքնանքի ամփոփման ցուցահանդեսային ձևը վաղուց ավանդական է դարձել: Միայն թե տարիների հետ փոխվում են ուսանողները, փոխվում են անհատական ճաշակի դրսևորումները...

«Ցուցահանդեսում ներկայացվել են «Տարրական կրթություն և մեթոդիկա» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողների կերպարվեստի դասավանդման մեթոդիկա առարկայի ուսուցման գործնական և ինքնուրույն աշխատանքները:

«Ընտրել ենք լավագույն, ավարտուն աշխատանքները, որոնք համահունչ էին տրված թեմային: Դասերի ընթացքում ուսուցանվում են ամենատարբեր միջոցների ու թեմաների կիրառություններն ու օրինաչափությունները, այնուհետև ուսանողներին հնարավորություն է տրվում ցուցադրել իրենց հմտությունների ու ճաշակի համադրված դրսևորումները՝ ցուցահանդեսների և այլ ձեռնարկների միջոցով:

Ապագա դասվարները պետք է աշխատեն երեխայի զարգացման ուղղությամբ, իսկ կերպարվեստը այն լավագույն միջոցն է, որի օգնությամբ հնարավոր է բացահայտել երեխայի ներաշխարհն ու ներուժը:

Պետք է նկատել, որ ուսանողները տարեցտարի ավելի են ձգտում պրոֆեսիոնալիզմի և ինքնակատարելագործման, ինչն ինձ հպարտանալու առիթ է տալիս»,-ասում է Ժաննա Խաչատրյանը:

Հենց սրահում էլ մի խումբ ուսանողուհիներ դասախոսների և ուսանողների ներկայությամբ մեծ ստվարաթղթի վրա, տարբեր ներկերով ու չորացած տերևներով, աշնանային գեղեցիկ պատկեր ստացան: Պարային ֆլեշմոբն էլ հաճելիորեն լրացրեց դահլիճի թեմատիկ ցուցահանդեսը՝ ներկաներին պարգևելով առատ ու բազմերանգ գույներ, ժպիտ ու տոնական տրամադրություն:

Ցուցահանդեսը դիտելու էին եկել համալսարանի դասախոսներ, ուսանողներ, հիմնական և ավագ դպրոցների աշակերտներ: Ցուցահանդեսը դիտելուց հետո աշակերտներն այցելեցին բուհիի թանգարան և ընթերցասրահներ:

Օրն ամփոփվեց ֆակուլտետում, ուր հյուրընկալվել էին Երևանի N 2 ավագ դպրոցի 12–րդ դասարանի աշակերտները և ուսուցիչները: Ֆակուլտետի ղեկավարները մասնագիտական թեստերի և ուսումնական խաղի միջոցով ծանոթացան աշակերտների մասնագիտական կողմնորոշումներին, նրանց ներկայացրին «Հաջողության բանաձև» հաղորդաշարից հատվածներ, իրազեկելով համալսարանական մասնագիտությունների մասին:

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողները հյուրերին նվիրեցին իրենց ձեռքով պատրաստված թեմատիկ նվերներ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Մանկավարժի առաքելությունը

Հազարամյակներ առաջ, երբ մարդկությունը հղկում էր բանականության ադամանդները, նորի փնտրտուքը դառնում էր քաղաքակրթական ելակետ: Երևակայությունը բոցավառվում էր, անհասկանալին բերում էր իմանալու անհրաժեշտություն: Զարգացող մարդը սովորելու պահանջ էր ունենում. ձևավորվում էր մանկավարժությունը: Ուսուցումը, որպես գիտելիքի փոխանցման գործընթաց, մեծ ճանաչում էր գտնում: Մանկավարժի գործը հումանիստական է, ուղղորդող և օգնող: Մարդկային ամեն մի կյանք, տիեզերքի ամեն մի խորհուրդ, յուրաքանչյուր երևույթ արժևորվում է իր առաքելությամբ: Գործով է գրվում արժեքի հավատամքը: Մանկավարժի դերը նույնպես իր առաքելությամբ է նշանավորվում:

Լեզվական հեղաշրջում էր մեր մեծ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի սխրանքը՝ հայ գրերի գյուտը: Դպրությունն իմացական վերելք էր ապրում, թարգմանված մատյանները պատմություն էին շարադրում, նորախոս հնությունը գալիք էր բարբառում: Մաշտոցյան պատգամները կարելի է ամփոփել այսպես. սրբորեն պահել երկնատու գիրը, գրականության ընդերքից հանել հավերժի մարգարիտը, սերունդներին կրթել ազգային ինքնության արժեքներով, անձնազոհությամբ պահել հայրենիքի սահմանները...

Մարդու կյանքում նշանակալի դեր ունի առաջին ուսուցիչը: Նա բացում է գիտության դռները, այբուբենը սովորեցնում է որպես մայրենի գաղտնագիր: Առաջին ուսուցիչը ստանձնում է կրթության մեկնարկը տալու առաքելություն:

Մանկավարժի առաքելությամբ կրթվում են սերունդներ, մտավոր տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ, սոցիալական այս կամ այն խմբին պատկանող անձինք: Վերջին զանգի օրը շատ շրջանավարտներ արցունքով են թողնում դպրոցը: Կյանքի նոր փուլն ազդարարվում է համալսարանական կրթությամբ, ուր ուսուցիչների առաքելությունը վստահվում է բուհի մանկավարժներին՝ դասախոսներին: Ուսանողների առջև նրանք բացում են աշխարհընկալման նոր հորիզոններ:

Սերը վեհության կանչն է: Մանկավարժի առաքելությունը սերն է. նա ջերմությամբ, սիրով ու նվիրումով է մոտենում աշակերտին:

Հայ մանկավարժին վստահված է կրթել ապագա զինվորին, մեր պատմական հայրենիքի պաշտպանին: Նա տալիս է հայոց իսկության ճանաչում, ազգային արժանապատվության զգացում, դարերի առջև հաշվետու լինելու զորություն:

Սերունդները ժամանակի շունչն են, հավատի քայլը, հույսի նորոգվող ճախրանքը: Կյանքը փորձում է նրանց: Մնայունն ու անցողիկը մարտնչում են գոյության խառնարանում: Հավերժի ծվենն է այն ամենը, ինչը վեր է ժամանակից:

Մանուկներն ու պատանիները դպրոցում են ճանաչում աշխարհը (իրենց չափով), այնտեղ են տեսնում կյանքի բազմիմաստ գույները: Մանկավարժը ճեղքում է իրականության միջուկը, վերծանում անհայտի առեղծվածները: Նա սովորեցնում է երազել՝ տեսնելով իրականի սահմանագիծը: Դպրոցում սովորածն արժևորվում է ամենօրյա գործերում:

Յուրաքանչյուր երեխայի մեջ ապրում է Փոքրիկ իշխանը: Գալիս է մի տարիք, երբ աստղերից իջած հրաշքը վերադառնում է իր մոլորակը: Դա լինում է այն ժամանակ, երբ անհուն թռիչքի կողքին գալարվում է անկման մորմոքը: Մանկավարժին վստահված է Փոքրիկ իշխանի վերադարձը... Ուսուցիչը պետք է ներկայացնի երկրագնդի անհուսորեն դաժան կողմը, միաժամանակ տեղ թողնի այն լուսավորի համար, որը գիշերում ծիծաղող աստղեր է վառում:

Համամարդկային ուսուցիչներն աշխարհին նվիրում են սեր, ապրելու կամք և հաղթության սխրանք: Հիսուս Քրիստոսը հավիտենական ուսուցիչ է: Նա պատգամում է սիրո հավատամքը: Լեռան քարոզում նրա ասած ինը երանիներն ուղենշում են կատարելության հավակնորդի շավիղները: Քրիստոսի առաքյալները տարածում էին նրա ուսմունքը, ընկալելի դարձնում անքննելի խորհուրդները:

Մեր բանաստեղծական հանճար, «Եկեղեցու տիեզերական ուսուցիչ» Սբ. Գրիգոր Նարեկացին սովորեցնում է մաքառող հոգու, մեղքի դեմ ընդվզելու, մշտանորոգ հարության բարոյամարտը:

Մանկավարժը սովորեցնում է ինքնաճանաչման արվեստը: Մանկավարժի առաքելությունը չի սահմանափակվում կրթական միջավայրով. ուսուցիչ է նա, ով գոյության մարտում սովորեցնում է պայքարել, հայրենի կռվում լինել անձնազոհ, ուսերին պահել ինքնության Արարատը:

Ամալյա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրս

ԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներառականությունը մեր օրերում

Միշտ առաջ շարժվել և առաջընթացի մեջ գեղեցիկ քայլերով փորձել տեսնել ոչ միայն քո խնդիրները, այլև ուրիշներինը: Մասնագիտությանս ընտրությունը թույլ տվեց հետևել այս կարգախոսին և այս գեղեցիկ խոսքերի բովանդակության էությունը հասկանալ նախ և առաջ իմ ներսում, իսկ հետո վարակել հասարակությանը: Ամենից առաջ պետք է տեսնել, զգալ, վերարտադրել, գիտակցել և հետո միայն ուղիներ փնտրել և օգնել ուրիշներին՝ հաղթահարելու այն, ինչ քոնը չլինելով՝ քոնն է դառնում: Մեծ կամքի ուժ ձեռք բերելով օգնում ես դիմացինին՝ հաղթահարելու վախերն ու տագնապները:

Ես սովորում եմ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիա բաժնում: Հպարտ եմ, նմանը չունեցող ֆակուլտետում ուսանելու համար:

Այսօր աջակցման կարիք ունեցող երեխաների թիվը, ցավոք, գնալով աճում է: Շատ ժամանակ խնդիրներն առաջանում են հենց ծնողների և ընդհանրապես շրջապատող մարդկանց թերի գիտելիքների պատճառով: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս ինտեգրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և բնականոն զարգացող երեխաներին մեկ կրթական համակարգում, ապահովելով նրանց կրթության իրականացումն ու սոցիալիզացիան:

Ներառական կրթական հաստատության հիմնարար սկզբունքն այն է, որ բոլոր երեխաները պետք է կրթություն ստանան միասին՝ անկախ դժվարություններից և նրանց միջև առկա տարբերություններից: Չնայած ներառականության գաղափարի անհրաժեշտությանը՝ Հայաստանի Հանրապետությունում դեռևս արդիական են դրան ուղղված աշխատանքների իրականացման խնդիրները: Շատ դպրոցներ հաճախ առնչվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական խնդիրների հետ, օրինակ՝ անհրաժեշտ պայմանների բացակայություն, համապատասխան մասնագետների ոչ ամբողջական անձնակազմ, ուսումնական գործընթացի կազմակերպման բարդ պրոցես և այլ բազմապիսի խնդիրներ: Ներառական կոչվելու համար կրթական հաստատությունը պետք է հարմարեցված լինի այնտեղ հաճախող բոլոր սովորողների կարիքներին և նրանց բազմազանությունն ընդունի որպես կրթությունն էլ ավելի հարստացնելու հնարավորություն:

Մեր ֆակուլտետը հանրապետության բուհական համակարգում միակն է: Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի բակալավրիատում կենտրոնացված են լոգոպեդիա, օլիգոֆրենոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն, տիֆլոմանկավարժություն մասնագիտությունները, մագիստրատուրայում՝ հատուկ հոգեբանություն, հատուկ մանկավարժություն, արտթերապիա, էրգոթերապիա, շտկող նախադպրոցական մանկավարժություն, ինչպես նաև բակալավրիատում առկա բոլոր բաժինները:

Նշված մասնագիտություններն ունեն լայն պահանջարկ ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտերկրում: Այստեղ սովորելուց հետո կարող ես ըստ մասնագիտացման, համապատասխան աշխատանք գտնել տարբեր զարգացման կենտրոններում, նախադպրոցական հաստատություններում, հատուկ և ներառական դպրոցներում, մանկապարտեզներում, բժշկական հաստատություններում, հոգեբանական ծառայություններ մատուցող կենտրոններում: Ֆակուլտետի յուրաքանչյուր մասնագիտություն ունի իր կարևոր նշանակությունը: Ցավոք օրեցօր ավելանում է զարգացման յուրահատուկ խնդիր ունեցողների քանակը, և նման մասնագետների պահանջարկը գնալով ավելանում է: Շատ ժամանակ խնդիրներն առաջանում են հենց ծնողների և ընդհանրապես շրջապատող մարդկանց թերի գիտելիքների պատճառով: Իրազեկումը այժմյան հասարակությունում կարևոր և պարտադիր պայման է, քանի որ ծնողների մի ստվար զանգված չի գիտակցում խնդրի լրջությունը: Իսկ խոսքի զարգացման խնդիր ունեցող երեխաների մոտ խնդիրը աստիճանաբար բարդանում է, նոր միայն ծնողները որոշում են դիմել համապատասխան մասնագետի(լոգոպեդի), և աշխատանքը կրկնակի բարդանում է: Ահա ինչու կոչ եմ անում մասնագիտական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուրին՝ հնարավորինս իրազեկել հասարակությանը:

Ուրախ եմ, որ կարող եմ իմ փոքրիկ լուման բերել մեր ֆակուլտետի մասնագիտությունների մասին հասարակության իրազեկմանը: Ես հպարտ եմ, որ ընտրել եմ հենց այս ֆակուլտետը: Շարունակելու եմ ձեռք բերել հնարավորինս շատ գիտելիքներ՝ հետագայում իմ կոչմանն ու առաքելությանը հարիր հասարակությանը օգտակար լինելու համար:

Մերի ՖԱՀՐԱԴՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ
լոգոպեդիա բաժնի 2-րդ կուրս

Գրետա ԱՎԱԳՅԱՆ. Ու ես դարձա լիալուսին...

Գրետա ԱՎԱԳՅԱՆԸ Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի սուրդոմանկավարժության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի է: Ընկերուհիներն ինձ ուղղորդեցին կարդալ նրա կայքէջը, որը կոչվում է «Խուլ աղջկա օրագիրը»... Կարդացի գրառումներից մի քանիսը հուզվեցի ու զարմացա, թե նման խնդիրներ ունեցող անհատն ինչպես չի հուսահատվել, հուսալքվել, ավելին՝ զգում է կյանքի ու բնության գեցեցկությունը, այնինչ նույն այդ բնությունը նրան զրկել է լսելու և խոսելու հնարավորությունից . Կարդացեք ու միացեք նրա Ֆեյսբուքյան էջին, որ զգաք մարդկային հոգու ամրությունը, որ նա էլ իր հոգում կուտակված ջերմությունն ու դրական լիցքերը կարողանա ավելի շռայլորեն բաշխել շրջապատին

Համալսարանը միշտ էլ այն մեծ երազանքն է եղել, որ նկատել եմ մայրիկիս ու տատիկիս աչքերում: Մանկուց միշտ երազել եմ դպրոցն ավարտելուց հետո համալսարանում սովորել ու մարդկանց ապացուցել, որ չլսող մարդն էլ է սիրում սովորել, ապրել, հիանալ, ի վերջո տալ այն, ինչ ունի իր հոգում: Ես ունեմ սեր, ժպիտներ, որոնք անսպառ են ու երբեք չեն մարի, ուր էլ լինեմ: Համալսարանի առաջին քայլերս տապալվեցին, չստացվեց... Այո, ցավոտ էր, հանդիմանանք կարդացի մայրիկիս աչքերում, ով անխոս հասկացնում է ինձ:

Չդիմացա, գաղտնի պարապեցի ու մայրիկիս հետ մտա համալսարան քննության օրը: Ինքնավստահ ժպիտով նայելով մայրիկիս՝ գնացի քննություն հանձնելու: Արդյունքն արդեն հասկանալի է, խոսքով չի պատմվի...

Մայրիկիս ու առհասարակ հարազատներիս ու շրջապատիս ուրախությանը սահման չկար... Ես արդեն հեռակա ուսուցման համակարգում եմ... Փոխադրվեցի 3-րդ կուրս:

Համալսարանում ուսանելու տարիներին ես հասկացա, որ խնդիրն իմ մեջ չէ, խնդիրը դասախոսների մեջ է. քանի դեռ նրանք չեն կարողանում ընդունել դիմացինին, երբեք չեն հասկանա դիմացի մարդու հոգեբանությունը: Պետք է լինի երկու փոխկապակցված հարաբերություններ դասախոսի և ուսանողի միջև: Ես հիմա պայքարում եմ, որ համալսարանում լինեն թարգմանիչներ չլսող ուսանողների համար: Առայժմ ՀՊՄՀ միակ (եթե չեմ սխալվում) խուլ ուսանողուհին եմ, ով սովորում է հատուկ կրթության բաժնում:

Ուզում եմ իմ մասնագիտությամբ աշխատել ինձ նման երեխաների հետ: Խնդիրները բազում են, նպատակները բյուրավոր...

Հավելեմ, որ իմ տեսակը հանձնվող չի, իմ տեսակը սիրում է պայքարել ու գոհ մի կողմ քաշվել արդյունքից հետո: Ես դա անում եմ ապագա սերունդների համար, քանզի գիտակցում եմ՝ ինչ դժվար կացության մեջ եմ ես:

***

Օրս սկսվեց գեղեցիկ լուսաբաց դիտելով... Ինչպիսի գունապնակի գեղեցկություն... Այդպիսի գեղեցկությունը ստեղծվում է Աստծո մի ձեռքի շարժումով: Նման գեղեցկությունը ոչ մի հանրաճանաչ նկարիչ չի կարող նկարել իր կտավներում...

Երանելի պահ է, որ դու ուշադիր հետևում ես ամեն մի գույնի վերափոխմանը:

- Բարի լույս, Տեր իմ,-շշնջացի ես:

Ի պատասխան երկնքից արևի շող դուրս եկավ...

Հրաշք իսկական:

Հավատում եմ, որ արդեն ճիշտ ուղու վրա եմ գնում և ավելի եմ մոտենում Տիրոջը, քանզի իմ սխալների պատճառով Նա համբերատար սպասեց ինձ: Նա թողեց, որ ես հասկանամ սխալս ու ընդունեմ Նրա երանելի հզորությունը:

Բարի, գեղեցիկ և գունավոր օր եմ մաղթում բոլորիդ:

Մտեք եկեղեցի, առանձնացեք ու աղոթեք, դրանից լավ ու հոգին հանգստացնող դեղ չեք գտնի: Դա շատ ժամանակ չի խլում:

Բարի լույս, սիրելի մարդիկ:

***

Օրս թարս էր սկսվել, բայց ես պատրաստ էի դրան: Նախ եղանակը հուսալի չէր, իսկ տրամադրությունս տեղում էր: Աշխատանքային օրս սկսվեց հենց ավտոբուսում: Կանգնած հասա ու իջա... Ոչ մի բան նոր չի չէ՞, բայց տհաճ նստվածքը մնաց: Դրսում մի պատանի թքեց... Թքեց իմ ներկայությամբ ու դրան դեռ նորմալ է նայում: Ամենուրեք ծխախոտի մնացորդներ են ու ձեր պատճառով փողոցները չեն շոյում մեր աչքը: Դեռ մյուսներն են կրկնում ձեր սխալը: Ու դժգոհում եք, որ մենք՝ աղջիկներս, չենք ԺՊՏՈՒՄ՝ այն էլ անկեղծ:

Գիտեմ՝ կյանքը առաջ է գլորվում, ու մարդիկ սկսում են դրան ուրիշ աչքերով նայել:

Ես դեմ եմ դրան և չեմ ցանկանա, որ կյանքը այսքան խորթանա ու տգեղանա:

Ում տեսնում եք ինչ-որ սխալ քայլ է արել ՝ ուղղեք, առանց ԱՄԱՉԵԼՈՒ... Քանզի դուք կոչված եք մարդկանց գեղեցիկ արարքներով դաստիարակելու: Օրինակ ես այդպիսին եմ: Երբ տեսնում եմ մեկը խոսում է ՝շարունակելով ու վերադառնալով նույն թեմային, համբերատար լսում եմ, իսկ վերջում առաջարկում եմ ուրիշ թեմայից զրուցել: Նրբորեն, սահուն անցում եմ ուրիշ թեմայի այնպես, որ նա էլ չի նկատում... Չեմ ուզում վիրավորել ու միանգամից ուղիղ ասել... Սխալ ԿՀԱՍԿԱՑՎԻ:

Իսկ ես դեռ մտքերի մեջ եմ... Բնությունը ինչքա՜ն է համբերատար... Ու ինչքա՜ն շռայլորեն իր գեղեցկությունն է պարգևում:

Անհանգստություններս թարթիչներիս վրա փաթաթված են ու անհամբերությունից ուզում են արցունքներ թափվել:

Բայց, համաձայն իմ հոգու ամրության այն չի գլորվում այտերիցս վար:

Հուշերը նրա մասին անընդհատ նեղում են ինձ, ու ես դառնում եմ մոռացկոտ ու ցրված և մի փոքր էլ նրանից նեղացած:

Կյանքի ամեն մի փուլում դու պիտի տոկուն և դիմացկուն լինես ու չնայած խեղդվելու չափ ուզում ես հանձնվել՝ ՉՀԱՆՁՆՎԵՍ:

Ու հիշիր, որ դու դատապարտված ես ՈՒԺԵՂ լինելու այս ՀՈԳԵԿԱՆ ու ԱՆՆՈՐՄԱԼ աշխարհում, որտեղ հաճախ ՀՈԳԻՆ է հոգնում, ՄԱՐՄԻՆԸ թուլանում, բայց ՄԻՏՔԸ արթուն է:

***

Կիսալուսին է իմ ուսին,
Ու ես դարձա լիալուսին,
Իմ սպիտակ հեքիաթն է ինձ կանչում
Ու աստղալույսով է ինձ ողողում:
Այնքան նուրբ ու սիրահարված,
Ուր կա խորհրդավոր սիրո դարձվածք,
Քննախույզ աչքերով նայում են ինձ՝
Իրենց քնքշանքով փարվում են հոգուս:
Երկնքում կիսալուսին է,
Սիրո մուրազ է,
Կիսալուսին է իմ ուսին,
Ու ես դարձա լիալուսին:

Սոցիալական ձեռներեցների առաջին դպրոցը

Սոցիալական ձեռնարկատիրությունը ձեռնարկատիրական գործունեություն է, որի բիզնես մոդելի հիմքում դրված է սոցիալական խնդիրների լուծումը և սոցիալական արժեքների ստեղծումը, և որն իր շահույթի մեծ մասը ծառայեցնում է սոցիալական բարեփոխումների իրականացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը: Այն ուղղված է բազմաթիվ սոցիալական ու տնտեսական խնդիրների նորարարական լուծումներին:

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 3-ին կայացավ Սոցիալական ձեռներեցության առաջին դպրոցի բացումը, որին ներկա էին շուրջ 100 մասնակիցներ, այդ թվում՝ ոլորտի առաջատար մասնագետներ:

«Նորաստեղծ դպրոցի նպատակն է պատրաստել մասնագետներ, որոնք կկարողանան օգտվել իրենց ստեղծագործական, ինտելեկտուալ և ձեռնարկատիրական կարողություններից, նպաստելով հասարակության սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացմանը»,-ասում է դպրոցի հիմնադիր Գոհար Մկոյանը:

Դպրոցի շրջանավարտները պետք է կարողանան ստեղծել սոցիալական բիզնես մոդելներ, նոր գաղափարներ, ինչպես նաև ձևավորել բարեգործական ֆոնդեր: Կրթական հաստատությունների հայեցակարգը կենտրոնանում է ինչպես ուսանողի ձեռնարկատիրական հատկանիշների զարգացման, այնպես էլ բիզնեսի կազմակերպական ասպեկտների, այդ թվում և իրավաբանական հայեցակետերի ուսուցման վրա:

Նորաստեղծ դպրոցի նպատակներից է նաև փորձառու և ոլորտի առաջատար մասնագետների մասնակցությամբ դասընթացների պարբերական կազմակերպումը, Հայաստանում և արտերկրում սոցիալական ձեռնարկատիրություն հիմնելու հնարավորությունների մասին տեսական գիտելիքներ և պրակտիկ փորձ փոխանցելը:

Դրանք անհրաժեշտ ու կարևոր տեղեկատվություն են բիզնես հիմնել ցանկացողների, բիզնես-սեփականատերերի, ուսանողների, Startup ծրագրեր ունեցողների, սոցիալական ոլորտում գործառնող մասնագետների՝ սոցիալական աշխատողների, սոցիոլոգների, մշակույթի ոլորտի ներկայացուցիչների, սոցիալական ձեռնարկատիրությամբ հետաքրքրված անձանց, բնապահպանների, բարեգործների, դասախոսների, կամավորների և ուրիշների համար:

Դասընթացների միջոցով տրամադրվող տեղեկատվությունը կնպաստի, որ յուրատեսակ օղակ ստեղծվի նոր քայլեր կատարողի և փորձառու ձեռնարկատիրոջ, ուսանողի և փորձագետի, ներդրողների և գործարարների միջև:

Դասընթացները կազմակերպվում են պարբերաբար, դասընթացների ժամանակ կարևորվում է ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ գիտելիքների փոխանցումը:

Դպրոցի շրջանակներում դասախոսություններով արդեն հանդես են եկել Հայաստանի Սոցիալական ձեռնարկատիրությունների ասոցիացիայի նախագահ Սաթիկ Բաղեյանը և Սոցիալական ձեռներեցության դպրոցի հիմնադիր, ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս Գոհար Մկոյանը, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի տնօրեն Գագիկ Վարդանյանը, ՀՊՄՀ շախմատի գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող Սամվել Միսակյանը, ոլորտի այլ հրավիրյալ մասնագետներ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել և վերհանվել են սոցիալական բիզնես գաղափարներ, անդրադարձ է կատարվել Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության հնարավորություններին և մարտահրավերներին, խոսվել է հաջողակ սոցիալական ձեռներարկատերի հիմնական բնութագրիչների մասին:

ԻՄ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Աշխարհում ամեն ոք իր սիրած անկյունն ունի: Այդ անկյունը թերևս մարդու ծննդավայրն է: Եվ ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ ամեն մի լեռնավանցու համար այդ անկյունը իր գյուղն է: Լեռնավանցին, իր բոլոր թերություններով հանդերձ, աշխարհի ամենասրտամոտ մարդն է: Շուրջ 190 տարի առաջ Սպիտակի տարածաշրջանում ապաստան գտած մի բուռ բասենցիներից ու մշեցիներից է սերվել այսօրվա լեռնավանցին՝ բասենցու փափկությամբ և «մշեցու կողով», ինքնասեր ու աշխատասեր, ուղղամիտ ու անկեղծ, պարզամիտ ու մաքուր, ինչպես ցանկացած լոռեցի (ինչը պայմանավորված է Լոռվա չքնաղ բնության ազդեցությամբ), կատակասեր, ավանդապահ ու նորամուծության ջատագով, խոսքաշոտ ու խոսքաշեն, հյուրասեր ու հյուրամեծար…

Լոռվա մարզի Սպիտակի տարածաշրջանում է գտնվում Լեռնավան գյուղը: Շատերը չեն էլ լսել այս գյուղի գոյության մասին և շատերին ծանոթ չեն գյուղի տարածքում գտնվող մշակութային և հնագիտական նշանակություն ունեցող կառույցները:

Հազարամյակների պատմություն չունի Լեռնավան գյուղը, սակայն հին է Լեռնավանի տոհմերի պատմությունը: Նրանց արմատները դարերի խորքերն են հասնում, որ վերընձյուղվել են Արևելյան Հայաստանում:

Մինչև 1930 թվականը բնակչությունն ապրում էր կիսագետնափոր, հողածածկ տներում: Տները միմյանց այնքան մոտ էին կառուցված, որ մեկը մյուսի տուն գնալու համար անցել են կտուրներով:

Գյուղի արևմտյան մասում գոյություն ունեն քարայրներ, որոնց մինչև այսօր էլ անվանում են «մաղարա», որ թուրքերեն նշանակում է քարանձավ: Այդ «Արջի բույն», «Լուսամուտ», «Դեդոյի օդա» և այլ անուններ ունեցող քարանձավներում գտնվել են խեցեղեն և ոսկրե իրերի մնացորդներ: Հնագետները դրանք վերագրում են Նոր քարեդարյան ժամանակաշրջանին (նեոլիթ, մ.թ.ա. 7-5-րդ հազարամյակ): Հավանաբար, անհայտությամբ հրապուրվող վերաբնակիչները ենթադրել են, որ այդ քարանձավները դաչաղ-ավազակների բնակատեղի են եղել. այստեղից էլ, ըստ ավանդության, ծագել է գյուղի անունը:

Հնագիտական ուսումնասիրությունները այս տարածքում կատարվել են Բորիս Գասպարյանի ղեկավարած քարանձավագետների կողմից, և աշխատանքները դադարեցվել են 1988 թվականին:

Լեռնավանն ունի մատուռներ և ուխտատեղիներ, որոնցից առանձնակի հետաքրքիր է «Թազա սուրբ» կոչվող ուխտատեղին. այն գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան հատվածի դժվարամատչելի մի վայրում: Հետաքրքրական է այդ սրբավայրի հետ կապված մի լեգենդ, որի համաձայն ամեն շաբաթ երեկոյան այս սրբավայրի քարերի մեջ լույս է վառվում՝ խորհրդանշելով Հիսուս Քրիստոսի ներկայությունը: Մեծ է հավատքն այս սրբավայրի հանդեպ, և բնակչությունը հաճախ է ուխտի բարձրանում սրբատեղի: Վերևի լանջերից դեպի «Թազա սուրբի» չիչխանները ջուր է հոսում, որին բուժիչ հատկություններ են վերագրվում, և նա, ով բարձրանում է ուխտի՝ այստեղից ջուր է խմում և իր հետ մեկ շիշ ջուր է բերում գյուղ՝ հիվանդ մերձավորների համար:

Գյուղում պահպանվում են նարեկներ և սրբապատկերներ: Դրանք գյուղում «Նարեկ» կոչված վեց սրբատեղիներն են: Առանձին անհատներ իրենց նարեկների համար մատուռներ են կառուցել: Գյուղում հայտնի է Տուտոյի Նարեկը:

Հնուց ի վեր «Նարեկ»-ին՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմին վերագրել են բուժիչ հատկություններ և այն հաճախ բարձի տակ է դրվել: Եվ հավատն այդ սուրբ գրքի նկատմամբ բուժիչ ազդեցություն է ունեցել:

Արվեստը և մշակույթը լեռնավանցու ատօրյայի մի մասն են կազմում: Եկեղեցու հին կառույցը ծառայել է որպես մշակույթի տուն: Այնտեղ տրվել են ներկայացումներ, համերգներ, ցուցադրվել են հայ կինոյի առաջնեկները, ինչպիսք են «Զարեհ», «Նամուս», «Խաստիուշ» և այլ ֆիլմեր:

Եկեղեցու հին կառույցը 1936 թվականին խորհրդային իշխանությունների կողմից քանդվեց, իսկ նոր կառույցը կանգուն ու անխաթար էր մինչև 1988 թվականի երկրաշարժը:

Գյուղի գործարարներից Մանվել Կարապետյանի նախաձեռնությամբ 1995 թվականին սկսվեց աղոթատեղին վերականգնելու սուրբ գործը: Տարբեր վայրերից նա հրավիրեց որակյալ վարպետների, որպեսզի եկեղեցին վերականգնեն: Օգտագործվեց ժամանակակից շինանյութ՝ թիթեղ, ցեմենտ և հատակը պատելու մարմար: Վերականգնվեց նախկին խորանը: Եկեղեցուն առանձնակի շուք տվեցին երեք բյուրեղապակյա ջահերը, իսկ բեմը վարագուրվեց թավշյա գործվածքով:

Նախկինում պահեստի վերածված աղոթատեղին ներկայումս հիասքանչ եկեղեցի է, որում կան բազմաթիվ սրբապատկերներ: Եկեղեցու ներսում և դրսում դրված շքեղ խաչքարերի վրա պատկերված են Տիրամայրը և Հիսուսի խաչելությունը: Կառուցվել է գավիթ և զանգակատուն, տեղադրվել է 1864 թվականին ձուլված զանգը:

Բարեկարգվել է նաև եկեղեցու շրջակայքը, կառուցվել են գյուղի կենտրոնական ճանապարհից դեպի եկեղեցի տանող աստիճանները, եկեղեցու բակում տեղադրվել է աղբյուր-հուշաքար:

Այսպիսով, թեև այս սուղ տեղեկություններին, կարող ենք փաստել, որ Սպիտակի տարածաշրջանում, այդ թվում և Լեռնավանում, պահպանվել են նախնադարյան ժամանակաշրջանից մնացած բազմաթիվ քարեդարյան կացարաններ, բրոնզեդարյան բնակատեղիներ, դամբարաններ, վանքեր և մատուռներ, որոնք հնարավորություն են տալիս տարածաշրջանին՝ դառնալ զբոսաշրջային խոշոր կենտրոն:

Գոհար Ավետիսյան
Մշակութաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ

Հայաստան,
լեռների ամուր կապուկը ձեռքիդ,
ցրտից կապտակող օդի մեջ համառ
շարժվում ես առաջ.
դեպի գերեվար Մայր լեառն Արարատ,
դեպի Գեղամա սարերն հեթանոս
(Սևանը՝ քուրմդ զմրուխտ տաճարի),
դեպ կտրուկ բացվող լեռնանցքը Շուշվա,
որ քեզ հանում է դուռը Արցախի:
Ահա ի՜նչ ուժ է քեզ ոգեկոչում՝
քանդել քարկապը դարավոր իղձիդ…

Դու դեռ կքայլես երկար ու երկար,
լեռներիդ շքերթն այնքա՜ն խրոխտ է,
այնքա՜ն ցնծագին:
Իսկ մինչ այդ, մինչ այդ,
սևասուգ մի օր,
դյութանքով Նեռի
դու մասնատվեցիր գագաթ առ գագաթ,
լեռնալանջերիդ արնահոս վերքեր
(Նոր սպի բացվող հների վրա),
ուր ցեղասպանի ժանտ դեմքը տեսար…
Անաղարտ ձյունն էլ իր վիրակապով
անկարող եղավ վրեժդ ամոքել:
Եվ երբ ձնհալը այրող ցավերի
ժահրը առվակեց դեպի Մայր Արաքս,
այգիներիդ ու արտերիդ վրա
իբրև բալասան անփույթ տարածեց
Տերը թաշկինակն իր ասեղնագործ:
Եվ աստվածային շնորհով վերին
Լեռան ընդերքից հորդացող հեղեղ՝
քո մանուկներն են
կանաչ հովիտներ փնտրում խուռներամ՝
հեքիաթի չքնաղ դղյակի համար:
Փնտրում են, վազում դեպի Մայր հողը,
ուր ժայռուտներին
վայրի վարդի պես փշոտ ու անբարբառ
ծաղկում է սերը լեռնաբնակի:

Այսպես դարեդար դու հետևում ես
Հայոց լեռների թափառումներին,
որ նույն ճամփան է կեռմանվող-կորչող
դեպ գրվող տողս
(մենք այնքա՜ն տարբեր ու
այնքա՜ն մի՛ ենք):
Իսկ իրականում
դու հենց Փյունիկի համաստեղության
աստղն ես լուսատու,
մեռնող ու հառնող,
միշտ բոցավառվող…
Դու վաղնջական,
ինչպես մորուքը Նոյ Նահապետի,
նույնպես և ներկա,
ինչպես ճգնաժամն աշխարհը ցնցող,
այստե՛ղ և հիմա՛:
Մաշկի պես ձուլված հոգուս քարտեզին
դու խաչելություն ու ճակատագիր,
Աստված ու աղոթք,
դու սրտեր սնող փորոք ես երկճյուղ՝
Հայաստան-Արցախ:

Ֆ. Ի. Տյուտչև՝ համաշխարհային երևույթ

Ֆ. Ի. Տյուտչևը համաշխարհային երևույթ է, որը գրականություն է բերել իր ուրույն ոճն ու փիլիսոփայությունը: «Պուշկինի ինստիտուտի» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնում կայացավ ռուս ականավոր բանաստեղծի ծննդյան 215-ամյակին նվիրված միջոցառում: Մանկավարժական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի և Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի (Ռոսսոտրուդնիչեստվո) նախաձեռնությամբ իրականացված միջոցառումը IX-րդ Հանրապետական «Գրական տարեդարձ» փառատոնի շրջանակներում էր, որին մասնակցեցին տարբեր դպրոցների և բուհերի ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի 2-4-րդ կուրսերի ուսանողներն անդրադարձան Տյուտչևի կյանքին, ստեղծագործական ուղուն, նրա ստեղծագործությունների թեմաների և կերպարների ինքնատիպությանը, շարժանկարների օգնությամբ ներկայացրին գրողի հայտնի սիրային բանաստեղծությունները:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո» գործակալության ներկայացուցիչներ Օլգա Լիկովան և Սոնա Սարաջյանը: Օլգա Լիկովան կարևորեց ամբիոնի դերը նման նախաձեռնության մեջ՝ հանձնելով պատվոգիր և ռուսալեզու գրականություն:

Ֆ. Ի. Տյուտչևին նվիրված միջոցառումը կազմակերպել էր ՀՊՄՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ինա Սարկիսյանը:

Սյուզաննա ԿՂՄԵՍՅԱՆ

Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնում

2018 թվականի նոյեմբերի 22-ին ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողներն ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջանակներում խմբի ղեկավար-մեթոդիստ Վարդուհի Հովհաննիսյանի, Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 հիմնական դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Թադևոսյանի, նույն դպրոցի 6-րդ բ դասարանի և աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողների հետ կատարեցին հետաքրքիր և բովանդակալից այց «ՀՀ Կենտրոնական բանկի այցելուների կենտրոն»: Միջոցառման օրը պատահական չէր ընտրված: Այդ օրը լրացավ ՀՀ պետական խորհրդանիշներից մեկի՝ ՀՀ դրամի ծննդյան 25-ամյակը: ՀՀ կենտրո-նական բանկի այցելուների կենտրոնի համակարգող-էքսկուրսավար Անժելա Գևորգյանը մեզ ներկայացրեց ԿԲ-ի հիմնական գործառույթները, դրամի պատմությունը, դրամավարկային քաղաքականության իրականացման հետևանքները, ԿԲ-Առևտրային բանկեր փոխկապվածությունը, տրվեց մանրամասն տեղեկատվություն գնաճի ու դրա հետևանքների մասին: Ծանոթացանք տարբեր ժամանակների (Արտաշիսյանների, Տիգրան Մեծի, Կիլիկյան Հայաստանի, Պարսկաստանի, Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվելու ժամանակաշրջանների) դրամներին:

Նոյեմբերի 22-ից աստիճանաբար շրջանառության մեջ կմտնեն երրորդ սերնդի թղթադրամները: Նոր սերնդի թղթադրամները տպված են բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, ինչի արդյունքում թղթադրամները կարող են օգտագործվել 3-4 անգամ ավելի երկար: Նոր սերնդի թղթադրամներն իրենց մեջ ներառում են այս պահին գործող լավագույն պաշտպանական հատկանիշները՝ թղթադրամի հումքի մեջ ներառված տեսանելի և անտեսանելի մանրաթելեր, պաշտպանական ներգիծ, պաշտպանական մանրագծեր, որոնք թղթադրամի սկանավորման կամ պատճենահանման դեպքում աղավաղում են պատկերը: Ինչպես նաև լուսածորող ներկով տպագրված հատվածներ, որոնք տեսանելի են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:

Երրորդ սերնդի թղթադրամների վրա նոր պատկերներ են: Հազար դրամ անվանական արժեքով թղթադրամների վրա Պարույր Սևակի, երկու հազարանոց թղթադրամի վրա՝ Տիգրան Պետրոսյանի, 5 հազարի վրա՝ Վիլյամ Սարոյանի,10 հազարի՝ Կոմիտասի, 20 հազարի՝ Հովհաննես Այվազովսկու, իսկ 50 հազար թղթադրամի վրա՝ Գրիգոր Լուսավորչի նկարներն են:

Ներկայացվեց դրամի կեղծ լինելը ստուգելու գործընթացը, որն իրականացվում է երեք տարբեր սարքավորումների օգնությամբ և անզեն աչքով ստուգելու համար դրամի առանձնահատկություններն ու պաշտպանիչ շերտերի առկայությունը: Էլեկտրոնային սահիկաշարքով աշակերտների հետ կատարեցինք ինտերակտիվ հարցում, լրացվեցին խաչբառեր, աշակերտներն էլ իրենց հերթին ներկայացրին մեր կողմից պատրաստած հետաքրքրաշարժ նյութերը՝ դրամի պատմության հետ կապված: Էքսկուրսիայի վերջում բոլորիս գեղեցիկ հուշանվերներ և ՀՀ դրամի թեմատիկայով շոկոլադե սալիկներ նվիրեցին: Այցելության ավարտին աշակերտները, ծնողները և իհարկե

մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, որ մանկավարժական պրակտիկայի ցանկացած շրջափուլ մեզ հնարավորություն է տալիս ամրապնդել բուհ-դպրոց, ուսանող-աշակերտ կապերը և պատրաստվել ապագա մանկավարժ-աշխարհագետի պատասխանատու կոչմանն ավելի լրջությամբ և սիրով:

Լիզա ԽՈՒՄԱՐՅԱՆ
Գոհար ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 06.12. 2018 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ